

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅ՝

Զ/հ	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ Վտանգավոր կենսաբանական և բժշկական թափոնների, կենսաբանական և քիմիական լաբորատոր թափոնների, իմունակենսաբանական պատվաստուկների ոչնչացում, այդ թվում՝	Զ/մ	ՔԱՆԱԿ
1	Վտանգավոր կենսաբանական թափոնների ոչնչացում	Կենսաբանական թափոնների հոր: Հորերի տեղակայման հասցեները՝ համաձայն հավելված 1.1-ի: Տեղափոխումը իրականացնել արտաձող սարքավորումներ ունեցող մեքենայի միջոցով (Շամբոյի հորերի դատարկման մեխանիզմով)՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N03-Ն հրամանի պահանջները: Վտանգավոր կենսաբանական թափոնների հորերի ծավալը ≤10 մ³: Պարունակությունը քլորամինով վարակագերծված կրծողների դիակներ, յուրաքանչյուր լցնելուց հետո ավելացված է քլորակիր: Վտանգավոր կենսաբանական թափոնների փոխադրման գործընթացի նկատմամբ ներկայացվում են հետևյալ պահանջները: 1) Վտանգավոր կենսաբանական թափոնների՝ կազմակերպությունից դուրս փոխադրումը պահանջում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված կազմակերպություն՝ այդ նպատակի համար սարքավորված հատուկ մեքենաների առկայությամբ: 2) Մեքենան պետք է համարված լինի արտահոսելու նկատմամբ դիմացկուն, ամբողջապես ծածկված, անվտանգ բեռնարկղեր, որոնք նախատեսված են փոխադրման ժամանակ կանխելու թափոնների թափվելը կամ արտահոսքը: 3) Թափոնների տեղափոխություն և ոչնչացում իրականացնող կազմակերպությունը պետք է ունենա թափոնների տեղափոխությունը գրանցող համակարգ, որպեսզի հնարավոր լինի փաստաթղթերով հիմնավորել թափոնների շարժը կազմակերպությունից մինչև իր վերջնական նպատակատեղ: 4) Մեքենայի վարորդը պետք է ունենա հատուկ վերապատրաստում՝ վտանգավոր կենսաբանական թափոններ փոխադրելու վերաբերյալ: 5) Թափոնների այրումը իրականացնել հատուկ իջկիզման վառարաններում, որոնք պետք է ներառեն հետևյալ հարմարանքները՝ վառարան կամ թրծման վառարան, որպես առաջնային այրման փակախուց, այրումից հետո նախատեսված փակախուց, որպես երկրորդային խուց, չոր, յուղոտ կամ կատալիտիկ վառման գազի մաքրման սարքի համակարգ, կեղտաջրի վնասագերծման սարք:	կգ	համաձայն հավելված 1.1-ի
2	Բժշկական թափոնների ոչնչացում	Բժշկական թափոնների՝ ոչ ախտահանված ծնունդներ, ծալված ֆիլտրի թղթեր, թանգիֆե անձեռնոցիկներ, սպիրտի շարիկներ, լանցեռ, միկրոկուլմետ, փաթեթավորման թղթեր և պլաստմասե արյան վերցման միանվագ օգտագործման վակուումային համակարգով փորձադիմեր ներառյալ ասեղ և այլն, համաձայն հավելված 1.2-ի, պատվիրատուի հաստատության տարածքից դուրս են բերվում և ոչնչացվում են կատարողի միջոցներով: Թափոնները պատվիրատուի հաստատությունում փաթեթավորվում են պոլիէթիլենային տոպրակներում և պատրաստվում կազմակերպության տարածքից դուրս բերման և ոչնչացման համար: Տեղափոխումը իրականացվում է կենսաբանական նյութերի տեղափոխման անվտանգության պահանջների պահպանումով՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 03-Ն հրամանի և այդ հրամանի հավելված 3-ով հաստատված «Բժշկական թափոնների անվտանգ գործածության» մեթոդական ուղեցույցի պահանջները: Տեղափոխման փաթեթները մակնշել կենսաբանական վտանգի և «Զգույշ սրածայրեր» նշաններով : Դուրս բերումը՝ պատվիրատուի հաստատության տարածքից համաձայն հավելված 1.2-ում ներկայացված հաստատությունների ցանկի:	կգ	համաձայն հավելված 1.2-ի
3	Կենսաբանական նյութի (այդ թվում դեղորայքի)՝ ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի ախտորոշիչ ՊՇՌ հավաքածուների, լաբորատորիայում օգտագործվող միջակայրերի, ախտորոշիչ շիճուկների և հակաբիոտիկների դիսկերի ոչնչացում	Ժամկետանց կենսաբանական նյութի (ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի, ախտորոշիչ ՊՇՌ հավաքածուներ, շիճուկներ) դուրս բերում՝ պատվիրատուի հաստատության տարածքից կատարողի միջոցներով և ոչնչացում: Պիտանիության ժամկետ անց հավաքածուները գտնվում են անհատական փաթեթավորված, արտադրողի կողմից թողարկված տուփերում: Պիտանելիության ժամկետ անց միջակայրերն իրենցից ներկայացնում են փոշի զանգվածներ՝ համասեռ, գնդված կամ քարացած՝ անհատական փաթեթավորված, արտադրողի կողմից թողարկված տուփերում և/կամ տարաներում: Ախտորոշիչ շիճուկներն իրենցից ներկայացնում են փոշի զանգված՝ անհատական փաթեթավորված, արտադրողի կողմից թողարկված սրվակներում (ամպուլաներում): Հակաբիոտիկների սկավառակները տվյալ հակաբիոտիկով ներծծված թղթե սկավառակներ են՝ փաթեթավորված ապակյա շշիկներում: Տեղափոխումը իրականացնել կենսաբանական նյութերի տեղափոխման անվտանգության պահանջների պահպանումով՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 03-Ն հրամանի և այդ հրամանի հավելված 3-ով հաստատված «Բժշկական թափոնների անվտանգ գործածության» մեթոդական ուղեցույցի պահանջները: Տեղափոխման փաթեթները մակնշել կենսաբանական վտանգի և «Զգույշ սրածայրեր» նշաններով: Դուրս բերումը՝ պատվիրատուի հաստատության տարածքից համաձայն հավելված 1.3-ում ներկայացված հաստատությունների ցանկի:	կգ	համաձայն հավելված 1.3-ի
4	Իմունակենսաբանական պատրաստուկների/պատվաստանուրների ոչնչացում	Ժամկետանց կենսաբանական նյութի (ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի, պատվաստանյութերի, շիճուկների) դուրս բերում՝ պատվիրատուի հաստատության տարածքից կատարողի միջոցներով և ոչնչացում: Պիտանիության ժամկետ անց իմունակենսաբանական պատրաստուկները գտնվում են անհատական փաթեթավորված արտադրողի կողմից թողարկված տուփերում: Ժամկետանց իմունակենսաբանական պատրաստուկների տեղափոխումը իրականացնել ապահովելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 03-Ն հրամանի և այդ հրամանի հավելված 3-ով հաստատված «Բժշկական թափոնների անվտանգ գործածության» մեթոդական ուղեցույցի պահանջները: Դուրս բերումը՝ պատվիրատուի հաստատության տարածքից համաձայն հավելված 1.4-ում ներկայացված հաստատությունների ցանկի:	կգ	համաձայն հավելված 1.4-ի

5	<p>Վտանգավոր քիմիական թափոններ</p>	<p>1. Վտանգավոր քիմիական թափոնների դուրս բերումը պատվիրատուի հաստատության տարածքից իրականացվում է կատարողի միջոցներով: Պիտանելիության ժամկետն անց քիմիական նյութերը գտնվում են արտադրողի և/կամ մատակարարողի անհատական փաթեթավորմամբ (ապակյա/պղիմերային տարաներով, պղիմերային պարկերով և այլն): Դուրս բերում՝ պատվիրատուի հաստատության տարածքից համաձայն հավելված 1.5-ում ներկայացված հաստատությունների ցանկի:</p> <p>2. Վտանգավոր քիմիական թափոնների փաթեթավորմանը ներկայացվում են հետևյալ պահանջները.</p> <p>1) Վտանգավոր քիմիական թափոնների փոխադրման համար պահանջվում են կարծր, արտահոսքի հնարավորություն չունեցող բեռնարկղեր, որոնք ունեն պինդ դրված կափարիչ, որը փակ է պահվում բացառությամբ այն դեպքերի, երբ նոր քիմիական թափոններ են ավելացվում կամ զետեղվում:</p> <p>2) Թափոնները տեղավորվում են երկտակ բեռնարկղերի մեջ՝ օգտագործելով պինդ կողքեր ունեցող, ծածկված բեռնարկղերը որպես արտաքին բեռնարկղ:</p> <p>3) Ապակե շշերով/տարաներով քիմիական թափոնների տեղափոխման համար պահանջվում են պլաստմասսայից պատրաստված կոնտեյներներ, որոնք ապահովում են այդ տարաների անվտանգությունը կոտրվելուց և նյութերի արտահոսքից:</p> <p>4) Պղիմերային պարկերի մեջ քիմիական նյութերը տեղավորելու դեպքում, պարկը անհրաժեշտ է լցնել կիսով չափ, որպեսզի թույլ չտրվի այդ նյութերի հնարավոր արտահոսքը:</p> <p>5) Անհրաժեշտ է ապահովել քիմիական անվտանգության պահանջների տեսանկյունից անհամատեղելի քիմիական նյութերի(օրինակ խիտ ազոտական թթու և ամիդային լուծույթներ) տեղափոխումը առանձին բեռնարկղերով:</p> <p>6) Բոլոր կոնտեյներների վրա փակցվում է «ՎՏԱՆԳԱՎՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԹԱՓՈՆ» արտահայտությունը:</p> <p>Պիտակի վրա կարող են նշվել նաև թափոնների նկարագրական անունները և բեռնարկղերի մեջ թափոնների առաջին անգամ դրվելու ամսաթիվը:</p> <p>3. Վտանգավոր քիմիական թափոնների փոխադրման և ոչնչացման աշխատանքները իրականացնող կազմակերպության աշխատակիցները պետք է անցած լինեն քիմիական անվտանգության և աշխատանքի անվտանգության հատուկ ուսուցում/հրահանգավորում:</p> <p>Այրման վառարանը պետք է ունենա.</p> <p>1) Լավ ուսուցանված և որակավորված աշխատողներ:</p> <p>2) Վառարանի աշխատեցում և մշտադիտարկում պարբերական պահպանման աշխատանքների միջոցով (այրման խցի մաքրում, օդի ներհոսքի հետևանքով առաջացած ներցման մաքրում և վառելիքի այրիչների մաքրում):</p> <p>3) Անձնական պաշտպանական հանդերձանք իր անձնակազմի համար, աշխատակիցները պետք է ապահովված լինեն անհատական պաշտպանության միջոցներով (ակնոցներ, հակազագեր, ռետինե երկարաճիտը կոշիկներ և զոզնոցներ, թթվակայուն ձեռնոցներ և այլն):</p> <p>4) Շրջակա միջավայրի ստանդարտ մշտադիտարկման արձանագրություններ:</p> <p>5) Հաշիվների ստուգում և հաշվետվություն ներկայացնելու համակարգեր:</p> <p>6) Ընդհանուր ինֆրաստրուկտուրա, սպահաստակում և օդափոխություն:</p>	կգ	համաձայն հավելված 1.5-ի
---	------------------------------------	---	----	-------------------------

*Վտանգավոր կենսաբանական և քիմիական թափոնների փաթեթավորման, փոխադրման և ոչնչացման գործընթացները կառավարվում են ՀՀ ԱՆ բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին 4 մարտի 2008 թ. N 03-Ն պահանջների համաձայն:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
 Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12
 Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
 Հ/Հ 2471201669930000
 ՀՎՀՀ 02625503

Գլխավոր տնօրեն՝ Ա. Վանյաս

 /ստորագրություն/
 Կ.Տ